

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՕՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Ս. Արքայի վարդապետ Տիգրանյանի նախաձեռնությամբ, Փետրվարյան Հոգևոր Ճեմարանի փեսայության հետ համապետ, նոյեմբերի 18-ին կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Գուգարաց թեմի սրբավայրեր:

Ուխտագնացությանը մասնակցում էին Ճեմարանի Ե լսարանի սաները, որոնք Հոգեշնորհ Արքայի վարդապետի առաջնորդությամբ վաղ առավոտյան ճանապարհ ընկան Ս. Էջմիածնից՝ վերանորոգելու իրենց ուխտը այն սրբավայրերում, որոնք դարձրել են շարունակ հոգևոր լույս են սփռել իրենց շուրջը:

Տեղացող ձյունն անգամ կարծես թե նախասահմանված էր և ուներ իր յուրահատուկ խորհուրդը, որովհետև ուխտավորներից շարքերն առաջին անգամ էին լինում Լուսավա աշխարհում, որի բնությունն էլ, իր խորհրդավոր գեղեցկությունն ավելի ակնառու դարձնելու համար, կարծես պիտի պնդեր առաջին ձյան շքեղությամբ:

Առաջին կայանը Սպիտակի նորակառույց Ս. Հարություն եկեղեցին էր, որն իրական հարություն էր առել դեռևս վիրավոր քաղաքի սրբում: Այստեղ ճեմարանականները հանդիպեցին եկեղեցուն կից գործող հոգևոր դպրոցի սաների հետ: Այնուհետև, գիշերային ժամերգությանը մասնակցելուց հետո, շարժվեցին Վանաձոր, ուր նրանց դիմավորեց Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Մեսրոպ եպս. Չուլջյանը և առաջնորդեց Ս. Աստվածածին և Ս. Սարգիս եկեղեցիներ: Այստեղ ուխտավորներն իրենց աղոթքը բարձրացրեցին առ Աստված: Պատարագից հետո ճեմարանականները հյուրընկալվեցին առաջնորդարանում:

Կեսօրից հետո ուխտավորների խումբն ուղևորվեց Ավաներդու նորած Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, որը ճարտարապետական փեսանկյունից, կարելի է ասել, յուրօրինակ խրաչումն է Օձունի, Սանահինի և Հաղպատի վանքերի: Այնուհետև ուխտավորները մեկնեցին Սանահին: Դժվար էր հեռանալ այստեղից, որովհետև այս խոհրդավոր վանքը, որի ամեն մի քար իր պատմությունն ունի, թվում էր, թե դեռ շա՛ր - շա՛ր ասելիք ուներ ուխտավորներին:

Վերջին ուխտատեղին Հաղպատավանքն էր, ուր ճեմարանականներին դիմավորեց և վանքի պատմությունը ներկայացրեց Բարեշնորհ Արկադի սարկավագ Թանդիլյանը: Այս շքեղաշուք վանքի հոյակերպ կամարների հովանու ներքո ճեմարանի սաներն ունեցան առանձնանալու, խոկալու և խորհելու ընդհանուր, որը մի փեսայի անխոս ուխտ էր առ Ամենաբարին Աստված, ուխտ, որով պիտի լինեին քաջ ու արթուն սպասավորները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ուխտավորները, հոգեպես հարստացած ու զորացած, վերադարձան Տուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրենց հետ բերելով անմոռանալի հուշեր ու փայլավորություններ, որոնք վստահաբար պետք է ուղեկցեն նրանց իրենց ողջ կյանքի ընթացքում:

ՆՈՎԱԴԱՆՆԵՍ ԴՊԻՐ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ
Փետրվարյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանի սան